«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ - Քերականության Մեթոդիկան Տարրական Դասարաններում

ԱՌԱՐԿԱ - Մայրենի

ՀԵՂԻՆԱԿ – Հերմինե Շահգալդյան

ՄԱՐԶ - Վայոց ձոր

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ – «Ագարակաձորի Յուրա Խաչատրյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն

Գլուխ1.Քերականական գիտելիքների յուրացման գործընթացի առանձնահատկությունները տարրական դասարաններում

Գլուխ 2. Լեզվական վարժությունների համակարգը

Գործնական մաս

Դասի պլաններ

Եզրակացություն

Գրականության ցանկ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Քերականության ուսուցման մանկավարժական սկզբունքների հաշվառումը լեզվի ուսուցման գործընթացի արդյունավետության պայմանն է, և դրանց անտեսումը կամ ոչ ճիշտ կիրառումը կարող են խոչընդոտել լեզվական գիտելիքների գիտակցական ընկալմանը:

Դրանք ուսուցման հայտնի սկզբունքներն են.

1. Գործնականության սկզբունքը. քերականական գիտելիքները կրտսեր դպրոցականներին պետք են մայրենի լեզվով բանավոր և գրավոր գրագետ խոսք կառուցելու համար: Դրանք պետք է ուսուցանվեն ոչ թե գիտական սահմանումների սերտման, այլ գործնական վարժությունների կատարման ճանապարհով:

2. Ուսուցման գիտակցականության և ակտիվության սկզբունքը. ուսուցման գործընթացը պետք է ապահովի ձեռք բերած լեզվա կան գիտելիքներն ու ունակությունները խոսքային գործունեու թյան մեջ հասկանալով և ճիշտ կիրառելու կարողություն: Գիտակ ցականության և ակտիվության սկզբունքները ներկայացվում են միասին, որովհետև ուսուցման մեջ գիտակցականության ապահո վումը հնարավոր է միայն ուսումնական նյութի յուրացման ընթաց քում աշակերտների ակտիվ գործունեության շնորհիվ, քանզի մի այն այդ ճանապարհով ձեռք բերված գիտելիքներն են ակտիվո րեն օգտագործվում գործնականում: Միաժամանակ կարևոր է իմանալ, որ արդյունավետ չէ, երբ լեզվական գիտելիքներն ուսու ցանվում են միայն ընդօրինակման ճանապարհով:

Մայրենի լեզվի տարրական ուսուցման գործընթացի արդյունավե տության բարձրացման համար անհրաժեշտ է՝

• լեզվական նյութի ուսուցումը կազմակերպել պարուրաձ սկզբունքով, որն ապահովում է անընդհատ անդրադարձը անցածին, ծանոթ ուսումնական նյութին, ունեցած գիտելիքների կրկնման ու ամրակայման հիմքի վրա, նոր գիտելիքների ձեռքբերումը,

• ուսուցանվող նյութի բովանդակությունը որոշելիս կարևորել նրա գործնական արժեքն ու հենց այդ փուլում դրա իմացության անհետաձգելիությունը,

• ուսումնասիրվող նյութն ընտրելիս և նրա ուսուցման մեթոդիկան որոշելիս առաջնորդվել տվյալ դասարանի երեխաների տարիքային առանձնահատկություններով և մտավոր պատրաստականու թյամբ,

• ամբողջ նյութի մեջ մտնող առանձին գիտելիքներն ուսուցանել և համապատասխան կարողությունները մշակել աստիճանաբար՝ փուլ առ փուլ,
• լայնորեն կիրառել մտածողական գործունեությունն ակտիվացնող հնարներ (վերլուծում, համադրում, համեմատում, դասակարգում,հակադրում, ապացույցներ, հիմնավորումներ),
• օգտագործել երեխաների ճանաչողական հետաքրքրությունները խթանող իրազննական և դիտողական միջոցներ

3. Գիտելիքների մատչելիության և կայունության սկզբունքը. յուրաքանչյուր լեզվական իրողություն բխեցնել երեխաներին ծանոթ նյութից և պրակտիկ գործունեությունը կազմակերպել՝ հենվելով նրանց կենսափորձի վրա,

• լեզվական ցանկացած գիտելիքի ուսուցումը, անհրաժեշտ կարողության ձևավորումը սկսել հատուկ նախապատրաստումից՝ երեխաներին մեկ անգամ ևս տանելով անցած ճանապարհով, այ սինքն՝ աշխատանքը կազմակերպել պարուրաձև սկզբունքով,
• նոր սովորած սահմանումները, եզրակացություններն ու ամփո փումներն ուսուցման սկզբում չպետք է պարունակեն բազմաթիվ դատողություններ: Քերականության ուսուցման հաջորդ փուլերում միայն կարելի է աստիճանաբար, բաժին առ բաժին ավելացնել գիտական ընդհանրացումները:

4. Ուսուցման զննականության սկզբունքը. հայտնի է, որ եթե գիտելիքները չեն խարսխվում տեսողական հիմքի վրա, դրանք կամ արագ մոռացվում են, կամ դառնում են չգիտակցված, չկիրառվող, միայն վերարտադրվող նյութ: Այդ իսկ պատճառով հայոց լեզվի դասերի ժամանակ հարկավոր է օգտագործել առարկաներ, դրանց նկարները, գծակարգեր, սլայդներ,

գծագրեր, աղյուսակներ, ուսուցման տեխնիկական միջոցներ և այլն, որոնք կբարձրացնեն դասի արդյունավետությունը և ուսումնասիրվող նյութի նկատմամբ երեխաների հետաքրքրությունը:

Գլուխ 1. Քերականական գիտելիքների յուրացման գործընթացի առանձնահատկությունները տարրական դասարաններում

Տարրական դասարաններում հայոց լեզվի ուսումնասիրման նպատակը կրտսեր դպրոցականների բառապաշարի մաքրումն ու հարստացումն է, խոսքի հղկումն է ու զարգացումը, արտահայտվելիք մտքին համարժեք բառեր ընտրելու, դրանք ուղղախոսության կանոններին համապատասխան արտաբերելու, հայերենի ուղղագրությանը համապատասխան գրելու և կապակցված խոսք (բանավոր և գրավոր) կառուցելու կարողության մշակումը: Բնականաբար, այս խնդիրների արդյունվետ լուծումն անհնար է առանց քերականական անհրաժեշտ գիտելիքների իմացության և դրանք խոսքում օգտագործելու համար կարևոր ունակությունների:

Մայրենի լեզվի քերականության յուրացումը նպաստում է նաև աշակերտների ճանաչողական կարողությունների, տրամաբանական մտածողության և լեզվամտածողության զարգացմանը, լեզվական իրողությունների յուրացման գործընթացում երեխաներն իրականացնում են այնպիսի տրամաբանական գործողություններ, ինչպիսիք են վերլուծությունն ու համադրումը, դրանց հիման վրա գտնում են լեզվական երևույթների միջև գոյություն ունեցող տարբերություններն ու ընդհանրությունները, կատարում են դատողություններ, փորձում են ընկալել բազմաթիվ վերացական երևույթներ: Այս ամենը զարգացնում է երեխաների մտածողությունը, այդ թվում նաև՝ վերացական մտածողությունը, որը ճանաչողության բարձրագույն աստիճանն է: Հայոց լեզվի մեթոդիկայի խնդիրն է, մայրենի լեզվի ուսուցումը դարձնել զարգացնող, այնպես կազմակերպել ուսուցումը, որ կոնկրետից վերացականին անցումը դառնա սահուն, ուսումնասիրվող նյութն աշակերտներն իսկապես հասկանան և կիրառեն իրենց խոսքում:

Այս խնդիրները կլուծվեն միայն այն դեպքում, երբ ընտրված ուսուցման մեթոդների և երեխայի զարգացման առանձնահատկությունների միջև գոյություն ունեցող կապերն ուսուցիչը հաշվի առնի դասի գործընթացում, որոշի այն օրինաչափությունները, որոնք ընկած են մայրենի լեզվի ուսուցման գործընթացի հիմքում:

Հայոց լեզվի ուսուցման գործընթացում ուսուցիչը պիտի որոշի ոչ միայն այն, թե ինչպիսի աշխատանք պիտի կատարեն ինքն ու աշակերտները, այլև այն մեթոդներն ու հնարները, որոնք արդյունավետ են քերականության և ուղղագրության ուսուցման գործընթացում: Պիտի կարևորել ոչ միայն դիդակտիկ նյութերի ու լեզվական խաղերի դերը, այլև այն, թե ինչ չափաբաժնով և երբ դրանք պետք է օգտագործվեն:

Հայոց լեզվի ուսուցման գործընթացում պիտի նախատեսել ուսուցումը հետաքրքրաշարժ, ինքնուրույն, ստեղծագործական, երևակայական դարձնող, աշակերտների ակտիվությունը բարձրացնող հնարներ:

Գլուխ 2. Լեզվական վարժությունների համակարգը

Որպեսզի լեզվական հասկացությունների ուսումնասիրման գործընթացում ձեռք բերած գիտելիքները սովորողները գիտակցորեն և ճիշտ օգտագործեն (գրավոր և բանավոր խոսքում), լեզվական գիտելիքների կիրառման ուղղությամբ տարվող աշխատանքները պետք է իրականացնել շարունակական և նպատակային վարժությունների միջոցով: Լեզվական վարժությունների անցկացման գործընթացը պետք է բավարարի մի շարք դիդակտիկական պահանջների . միևնույն լեզվական իրողության յուրացման նպատակով պետք է կազմակերպել բազմաթիվ և տարատեսակ վարժություններ,

• վարժությունների կատարումը պետք է կրի շարունակական և համակարգված բնույթ, ինչպես նաև յուրաքանչյուր վարժություն պետք է հիմք նախապատրաստի հաջորդ վարժության կատարման համար,

• վարժությունների առաջադրանքները պետք է կարդան աշակերտները, բացատրեն, մեկնաբանեն և ինքնուրույն պլանավորեն դրանց կատարման քայլերը,

• վարժությունների կատարման գործընթացում պիտի կարևորվի երեխաների ինքնուրույն գործունեությունը,

• պիտի ապահովվի վարժությունների տեսակների որոշակի հաջոր դականություն,

• վարժությունների իրականացումը պիտի հենվի երեխաների ունեցած փորձի վրա,

• վարժությունների բովանդակությունը պետք է համապատասխանի երեխաների տարիքային առանձնահատկություններին, բավարարի նրանց ճանաչողական հետաքրքրությունները, նպաստի երեխաների մտահաղորդակցական կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը:

Քերականական վարժություններն իրենց հետապնդած նպատա ներով լինում են .

1. Նախապատրաստական վարժություններ: Այս վարժությունները երեխաներին նախապատրաստում են լեզվական նյութի ուսումնասիրմանը, նպաստում են նրանց լեզվամտածողության զարգացմանը, ձեռք բերած քերականական հասկացությունների ձևավորմանը, նոր քերականական գիտելիքների ձեռքբերմանը: Այս վարժությունների միջոցով երեխաներն աստիճանաբար ձեռք են բերում ինքնուրույն աշխատանքի փորձ:

Նախապատրաստական վարժությունները նախ անհրաժեշտ է կատարել գրատախտակին (համադասարանային աշխատանքի միջոցով)՝ ապահովելով յուրաքանչյուր աշակերտի մասնակցությունը: Մինչև վարժության կատարելն անհրաժեշտ է աշակերտների միջոցով հանգամանորեն վերլուծել առաջադրանքը, բացահայտել այն խնդիրները, որոնք առաջադրվում են վարժության հանձնարարականում: Այնուհետև անհրաժեշտ է լեզվական անծանոթ իրողությունը բազմակողմանիորեն ճանաչել, նրա քերականական հատկանիշներն ըմբռնել տալ, այնուհետև հենվելով այս ամենի վրա՝ կատարել առաջադրանքը:

2. Մարզողական վարժությունները հիմնականում կատարվում են երեխաների կարդացած բնագրերի կամ դրանցից ընտրված հատվածների շուրջ: Դրանք իրենց մտքերն արտահայտելու, ընտրելու, ընդգծելու, դասդասելու, ամբողջացնելու, փոխարինելու և նման այլ հանձնարարականներ պարունակող վարժություններ են, որոնք նպաստում են երեխաների ձեռքբերած գիտելիքները կարողությունների և հմտությունների վերածելուն, այսինքն՝ երեխաները հմտանում են նոր սովորած գիտելիքները ճիշտ և վարժ կերպով կիրառելու մեջ:

3. Վերլուծական վարժությունների միջոցով աշակերտները ձեռք են բերում իրենց ունեցած գիտելիքները վերլուծելու, համակարգելու, վաղօրոք յուրացրած, ըմբռնած և նոր ուսումնասիրվող հասկացությունների միջև գոյություն ունեցող ակնառու կապերը տեսնելու կամ նորերը ստեղծելու ունակություններ, նպաստում են վերլուծական–քննադատական մտածողության ձևավորմանը:

4. Կիրառական վարժություններ: Սրանք հիմնականում ձևավորում են ձեռք բերած գիտելիքները գրավոր կամ բանավոր խոսքում նույնությամբ կամ ստեղծագործաբար կիրառելու ունակություն:

5. Ստեղծագործական վարժություններ: Վարժությունների այս խումբը աշակերտներին ուղղորդում է սովորած լեզվական իրողությունները, հասկացությունները ստեղծագործաբար կիրառել. ամբողջ աշխատանքը աշակերտները կատարում են ինքնուրույն՝ կիրառելով նոր յուրացրած լեզվական հասկացությունները:

Եթե քերականական վարժություններն իրականացվում են ըստ ձևավորվող գիտելիքների բնույթի, ապա դրանք լինում են հնչյունային, բառակազմական, ձևաբանական շարահյուսական, որոնց կատարման ընթացքում աշակերտներից պահանջվում են վերլուծելու, հակադրելու, համադրելու, համեմատելու, դասակարգելու, ընդհանրացնելու կարողություններ:
Ցանկացած տիպի վարժություն կատարելիս պիտի հելամուտ լինել, որ առաջադրանքում տրված հանձնարարությունը երեխաները, ոչ միայն կատարեն գործողությունների որոշակի հաջորդականությամբ, այլև բացատրեն ինչու հենց այդ հաջորդականությամբ, և բծախնդրորեն հետևեն այդ հաջորդականությանը:

6. Հնչյունային վարժություններ աշակերտները կատարում են ինչպես գրաճանաչության ընթացքում, այնպես էլ գրաճանաչության ն ավարտից հետո, երբ հնչյուններն սկսում են ուսումնասիրել որպես լեզվական հասկացություն, և գրաճանաչության շրջանում հնչյունների մասին նրանց ունեցած գիտելիքները համակարգվում են:

7. Բառակազմական վարժությունների միջոցով ուսուցանվում և ամրակայվում են բառի կազմության մասին երեխաների ունեցած գիտելիքները և աստիճանաբար վերածվում կարողությունների: Դեռևս գրաճանության նախապրբենական շրջանում բառակազմական պարզ վարժությունների միջոցով երեխաները մատչելի լեզվական գիտելիքներ են ձեռք բերում բառի, նրա վանկային կառուցվածքի, որոշակի ընդհանրություն ունեցող բառախմբերի մասին (գրենական պիտույքներ, խաղալիքներ, ծաղիկներ, կենդանիներ, մասնագիտություններ և այլն) սովորում են այդ բառախմբերի ընդհանրացնող անունները և կարողանում են ըստ ընդհանրացնող անունների՝ բառերը բաժանել խմբերի և այլն: Այս վարժությունները ոչ միայն նպաստում են լեզվական գիտելիքների ձեռքբերմանը, դրանց կիրառմանն ու ամրակայմանը, այլև ձևավորում են սովորողների լեզվամտածողությունը, լեզվական « հոտառությունը», մշակում են վերլուծելու, համադրելու, դասդասելու կարողություններ, որոնք աստիճանաբար նպաստում են բարձրակարգ մտածողության ձևավորմանը:

8.Ձևաբանական վարժություններ կատարելիս աշակերտները բնութագրում են առաջադրված նախադասության մեջ օգտագործված յուրաքանչյուր բառ՝ ներկայացնելով այդ բառի՝ իրենց

հայտնի բոլոր առանձնահատկությունները (որպես խոսքի մաս)։ Լեզվական նախագիտելիքների ուսուցման փուլում աշակերտները տալիս են տվյալ բառին համապատասխանող հարցը և ասում, թե այն ինչ է ցույց տալիս՝ **առարկա, առարկայի գործողություն, առարկայի հատկանիշ**, իսկ հեկտակա վուլերում այդ գիտելիքներն ընդլայնվում են և խորանում։

9. Շարահյուսական գիտելիքների ուսուցումն իրականացվում է աստիճանաբար՝ դասարանից դասարան բարդանալով։ Շարահյուսական վարժությունները զետեղվում են մայրենիի դասագրքերում, և ուսուցիչները հիմնականում առաջնորդվում են դրանով, սակայն պետք է նկատի ունենալ, որ այդ վարժությունների մեթոդապես ճիշտ կատարումն աշակերտներից պահանջում է որոշակի գիտելիքներ և ունակություններ։ Հետևաբար անհրաժեշտ է վարժությունը կատարելուց առաջ կրկնել այն գիտելիքներն ու կարողությունները, որոնք պետք կգան առաջադրանքն իրականացնելիս, իսկ վերլուծությունն իրականացնել տվյալ դասարանի ծրագրով նախատեսված գիտելիքների և կարողություններ րի մակարդակին համապատասխան։

Շարահյուսական վարժությունների կատարման ժամանակ անպայման պետք է իրականացնել նաև կետադրական վերլուծություններ։ Բոլոր տեսակի լեզվական վարժությունները կատարելիս պիտի կարևորել այդ գործընթացում աշակերտների ինքնուրույնությունն ու ակտիվությունը, ստեղծագործական-որոնողական գործունեությունը՝ կանխելով լեզվական խնդրի մեխանիկական, ոչ գիտակցական, մասնավորապես տրված նմուշօրինակի հիման վրա լուծումը։

Գործնական մաս

Բոլոր ժամանակնորում էլ երեխաները ձգտել են խաղալու… դա ինքնարտահայտման , ինքնակայացման, ինքնակատարելագործման, աշխարհը և իրենց ճանաչելու հրաշալի միջոց է։ Խաղը թեթևացնում է սխալների և անհաջողությունների ազդեցությունը։ Լինելով գործունեության բավականին լուրջ տեսակ՝ այն միևնույն ժամանակ երեխայի մեջ չի առաջացնում հիասթափության, անհաջողության զգացողություն։ Խաղային գործունեությունը բացառիկ նշանակություն ունի մարդկանց մտավոր և ֆիզիկական զարգացման համար։ Խաղը ուսուցչի օգնականն է , ուսումնական գործունեությունը երեխաների համար հետաքրքրաշարժ և հաճելի դարձնելու, նրանց հոգնածությունը և լարվածությունը թուլացնելու, ուշադրությունը կենտրոնացնելու, մտածողությունն ու երևակայությունը զարգացնելու գործում։

Ստրոն ներկայացնում եմ խաղեր, որոնք կօգնեն էլ ավելի հետաքրքիր և արդյունավետ անցկացնել դասապրոցեսը խոսքի մասերի ուսուցման ժամանակ։

Խաղ 1

ԳՏԻ՛Ր ՔՈ ԽՈՒՄԲԸ

ԽԱՂԻ ՆՊԱՏԱԿԸ: Առարկա ցույց տվող բառերի թվի մասին պատկերացման ձևավորում, դասակարգելու, խմբավորելու կարողության զարգացում։

ԽԱՂԻ ԿԱՀԱՎՈՐՈՒՄԸ: Պատրաստել եզակի և հոգնակի թվով առարկա ցույց տվող բառեր պարունակող քարտեր, երկու զամբյուղ՝ «Մեկ առարկա», «Մեկից ավելի առարկա» անուններով։

ԽԱՂԻ ԸՆԹԱՑՔԸ: Գրատախտակին կամ պատին ամրացնել զամբյուղները։ Խաղի մասնակիցներին բաժանել երեքական քարտ։

Հրահանգ: Երբ լսեք «Գտի՛ր քո խումբը» հրահանգը, պետք է արագ մոտենաք գրատախտակին և ձեր քարտերից մեկը տեղադրեք համապատասխան զամբյուղի մեջ։ «Կանգ առ» հրահանգից հետո ոչ ոք այլևս չի կարող քարտ տեղադրել զամբյուղների մեջ։ Զամբյուղների մեջ դրված բառերի վերլուծությունից հետո նորից կհնչի «Գտիր քո խումբը» հրահանգը, և դուք կրկին

հնարավորություն կունենաք քարտերը դնելու զամբյուղների մեջ: Խաղը կշարունակվի այնքան, մինչև որ բոլոր բառերը կհայտնվեն զամբյուղներում:

Խաղ 2

Ո՞Ր ԾԱՌԻՑ ԵՆ ԸՆԿԵԼ ՏԵՐԵՎՆԵՐԸ

ԽԱՂԻ ՆՊԱՏԱԿԸ: Անձ և իր ցույց տվող բառերը տարբերելու և դրանք խոսքում ճիշտ կիրառելու կարողության զարգացում:

ԽԱՂԻ ԿԱՀԱՎՈՐՈՒՄԸ: Ստվարաթղթից կտրել երկու ծառ՝ «անձ» և «իր» անուն– ներով: Թղթից կտրատել բառ–տերևներ: Նախապատրաստել ամրակներ կամ կպչուն ժապավեն:

ԽԱՂԻ ԸՆԹԱՑՔԸ: Խաղի մասնակիցներին բաժանել խմբերի: Ծառերն ամրաց նել գրատախտակին: Խմբերին տալ տասական բառ–տերևներ:
Հրահանգ: «Անձ» և «իր» ծառերի տերևները թափվել են ուժեղ քամուց: Խմբերը պետք է բառ–տերևները ամրակներով կամ կպչուն ժապավենով ամրաց նեն համապատասխան ծառերին: Հաղթող կճանաչվի աշխատանքը ճիշտ և արագ կատարող խումբը:

Ուշադրություն: Ստվարաթղթից պատրաստված ծառերի անունները փոխելով՝ կարելի է ուսումնասիրել լեզվական տարբեր գիտելիքներ՝ պարզ և բարդ բառեր, եզակի և հոգնակի թվով գոյականներ և այլն:

Խաղ 3

ԵՍ ԱՍԵՄ, ԴՈՒ ԼՐԱՑՐՈ՛Ւ

ԽԱՂԻ ՆՊԱՏԱԿԸ: Ձևաբանական գիտելիքները կիրառելու կարողության զարգացում, մտքի ճկունության, արագ արձագանքելու կարողության, ուշադ րության խթանում:

ԽԱՂԻ ԸՆԹԱՑՔԸ:

Հրահանգ: Երեխաներ, ես կասեմ առարկա ցույց տվող բառեր և ում որ մատնա ցույց անեմ, նա պետք է արագ լրացնի իմ միտքը՝ ասելով համապատաս խան գործողություն ցույց տվող բառը: Մյուսները պետք է լուռ հետևեն և յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատեն ծափով: Օրինակ՝

– Արևը……. (ծագում է, տաքանում է, շոգում է .....):

– Գետակը……. (վարարում է, հոսում է, քչքչում է .....): (բուժում է, դեղ է նշանակում .....):

-Դերձակը…… (կտրում է, կարում է, փորձում է .....):

Խաղ 4

ԳՏԻ՛Ր ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԸ

ԽԱՂԻ ՆՊԱՏԱԿԸ: Առարկա, գործողություն, հատկանիշ ցույց տվող բառերի միջև կապի գիտակցում, ուշադրության, մտածողության զարգացում: ԽԱՂԻ ԿԱՀԱՎՈՐՈՒՄԸ: Փոքր գնդակ:

ԽԱՂԻ ԸՆԹԱՑՔԸ: Խաղի մասնակիցներին կանգնեցնել շրջանաձև: Հրահանգ: Գնդակը միմյանց նետելով՝ ասելու ենք բառեր: Առաջին խաղացողը պետք է ասի առարկա ցույց տվող բառ (օրինակ՝ հաց) և ձեռքի գնդակը նետի մեկ այլ խաղացողի: Վերջինս պետք է կրկնի առաջին խաղացո ղի ասած բառը՝ ավելացնելով դրան համապատասխան հատկանիշ ցույց տվող բառ (օրինակ՝ համեղ

հաց), և գնդակը պետք է ների մի երրորդ խաղացողի: Սա, կրկնելով առաջին երկու խաղացողների արտասանած բառերը, պետք է ավելացնի համապատասխան գործողություն ցույց տվող բառ (օրինակ՝ համեղ հաց կերա) և փոխանցի գնդակը: Հաջորդ խաղացողը կսկսի սկզբից:

Խաղ 5

ԶԲԱՂԵՑՐՈ՛Ի ՃԻՇՏ ԱԹՈՌԸ

ԽԱՂԻ ՆՊԱՏԱԿԸ: Առարկա, գործողություն, հատկանիշ ցույց տվող բառերի վե վելու կարողության զարգացում:

ԽԱՂԻ ԿԱՀԱՎՈՐՈՒՄԸ: Նախապատրաստել թիկնակներով երեք աթոռ, «առար կա», «գործողություն», «հատկանիշ» բառ-քարտեր, առարկա, գործողու– թյուն, հատկանիշ ցույց տվող բառերով լի արկղ:

ԽԱՂԻ ԸՆԹԱՑՔԸ: Սենյակի կենտրոնում դնել աթոռները, թիկնակներին ամ րացնել «առարկա», «գործողություն», «հատկանիշ» բառ–քարտերը: Խաղի մասնակիցներին բաժանել երեք խմբի:

Հրահանգ: Ամեն անգամ «Զբաղեցրու ճիշտ աթոռը» հրահանգից առաջ բոլոր խմբերից մեկական խաղացող պետք է մոտենա և մեկ բառ վերցնի արկ ղից: Երբ հրահանգը հնչի, «բառերը» պետք է արագ զբաղեցնեն իրենց համապատասխան աթոռները: Օրինակ՝ եթե ինչ–որ մեկը վերցրել է «բուրավետ» բառը, նա պետք է նստի «հատկանիշ» աթոռին: Ով չհասցնի զբաղեցնել աթոռներից մեկը, դուրս կգա խաղից: Հաղթող կճանաչվի այն խումբը, որը քիչ խաղացողներ կկորցնի:

Ուշադրություն: Այս խաղն արդյունավետորեն կարելի է կազմակերպել նաև «պարզ», «բարդ», «ածանցավոր» բառերի ուսուցման ժամանակ:

Խաղ 6

ԿԱՆԳՆԻ՛Ր, ՆՍՏԻ՛Ր

ԽԱՂԻ ՆՊԱՏԱԿԸ: Ձևաբանական գիտելիքների ամրակայում, հարցերի միջո ցով խոսքի մասերը տարբերելու կարողության զարգացում:

ԽԱՂԻ ԸՆԹԱՑՔԸ:

Հրահանգ: Ես արտասանելու եմ տարբեր բառեր: Երբ լսեք ով հարցին պատաս խանող բառեր, պետք է կանգնեք և ձեռքերը բարձրացնեք վեր: Ի՞նչ հարցին պատասխանող բառեր լսելիս պետք է նստեք՝ ձեռքերը պարզելով առաջ: Այլ հարցերի պատասխանող բառերի դեպքում պետք է մնաք անշարժ:

Խաղ 7

ՇՂԹԱ

ԽԱՂԻ ՆՊԱՏԱԿԸ: Գոյականի հոլովների մասին պատկերացման ամրակայում, գործողություն ցույց տվող բառերի հետ գոյականները ճիշտ վերջավորու թյամբ կիրառելու կարողության զարգացում:

ԽԱՂԻ ԿԱՀԱՎՈՐՈՒՄԸ: Քարտերի վրա գրել գործողություն ցույց տվող բառեր և մեկական գոյական: Օրինակ.

կտրել — թուղթը,

կարդալ — գիրք,

մոտենալ — շենքին,

ԽԱՂԻ ԸՆԹԱՑՔԸ: Երեխաներին բաժանել խմբերի: Յուրաքանչյուր խմբի տալ մեկ քարտ և պահել ժամանակը:

Հրահանգ: Մեկ րոպեի ընթացքում խմբերը պետք է շարունակեն շղթաները՝ գործողություն ցույց տվող բառերի դիմաց գրելով գոյականներ: Որ խմբի բա ռաշղթաները երկար լինեն, այդ խումբը կճանաչվի հաղթող:

Հիմնական դժվարությունները հանդիպել եմ բայի ուսուցման ժամանակ: Անհրաժեշտ է բայի ուսուցման գործընթացում կարևորել օժանդակ բայի անջատ գրությունը, ուղղագրությունը և ուղղախոսությունը: Հետագայում՝ բայի թվի մասին գաղափար տալիս, բազմաբնույթ վարժությունների կատարման ճանապարհով աշակերտները կգան այն եզրակացության, որ օժանդակ բայերը ոչ միայն բայի դեմքի, այլև թվի կրողներ են՝ արտահայտում են բայի թիվը: Իսկ հետո նրանք կիմանան նաև, որ օժանդակ բայերը բայի ժամանակի կրողներ են:

Կրտսեր դպրոցականները դժվարությամբ են յուրացնում բայի դեմք հասկացությունը: Հաշվի առնելով այս հանգամանքը՝ անհրաժեշտ է առավել հաճախակի կատարել տարբեր վարժություններ:

Վարժություն 1

Առանձին սյունակներով խմբավորի՛ր առաջին, երկրորդ և երրորդ դեմքի բայերը և գրի՛ր:

Գրում եմ, մտածում է, նկարում ենք, նստել ես, գնացի, փայլում է, ծաղկեցին, գտել է, արթնացել են, գրում ես:

Վարժություն 2

Տրված դիմավոր բայերին առաջադրի՛ր հարցեր և գրի՛ր:

Օրինակ՝ գրում եմ - ի՞նչ եմ անում: Կարդում է, եկավ, որոշեցինք, ծաղկել են, նկարում ես, գտա, հասանք, բարևել եք, բացվեց, սառչելու է, հանդիպել ենք:

Վարժություն 3

Որոշիր տրված բայերի դեմքը, դարձրո՛ւ անդեմ և գրի՛ր։ Ջերմացնում է, գնում են, որոշեցի, իջավ, թափվել են, պատմեցիր, տեսնում ենք, խաղում են, մտածում ես։

Վարժություն 4

Տրված դիմավոր բայերի կողքին գրի՛ր ես, դու, նա բառերը և որոշի՛ր դրանց դեմքը։

Օրինակ՝ գրում եմ - ես գրում եմ (1-ին դեմք) Գնում եմ, հիշել ես, ուշացավ, ծերացել է, հոգնեցիր։

Ուսուցման հետագա փուլում դարձյալ վարժությունների կատարման ճանապարհով աշակերտները պետք է սովորեն նախադասության մեջ (խոսքում) հարցադրման միջոցով ոչ միայն որոշել առարկայի հատկանիշ ցույց տվող բառերը, այլև լրացնել բաց թողնված ածականները նախ համապա տասխան հարցի օգնությամբ, ապա՝ առանց հարցի։

Աշակերտների բառապաշարը ածականներով հարստացնելուն նպաստում են ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր ստեղծագործական շարադրությունները, մանավանդ, երբ դրանք հաջորդում են էքսկուրսիաներին, բնության մեջ կատարվող տարաբնույթ դիտումներին, նկարների և առար կաների դիտումներին, որոնք առավելագույնս նպաստում են, որ աշակերտները տեսնեն և առանձնացնեն առարկների էական հատկանիշները, ընտրեն այդ հատկանիշները ներկայացնող դիպուկ բառեր և օգտագործեն խոսքում։

Դասի պլաններ

Դասի պլան N1

Դասարան IV

Դասի թեման – Մ. Կորյուն, Սեխի թուփն ու ընկուզենին

Ժամաքանակը – 2 դասաժամ

Նպատակը – Ստեղծագործական հիմնական գաղափարի ընկալման կարողության զարգացում

Վերջնարդյունք – Հասկանալ տեքստի բովանդակության նկարագրման և սեփական կենսափորձի մեջ կապը։

Դասի ընթացքը

Խթանման փուլ

Մտագրոհի միջոցով պարզել աշակերտների մտքում առաջացած զուգորդումները, այնուհետև խմբավորել գրառումները պարզելով մի կողմից առակի ժանրային առանձնահատկությունները, մյուս կողմից՝ իմացած առակները։

Իմաստի ընկալման փուլ

Առակի ընթերցում

Բնագրային աշխատանք

* Բառային աշխատանք

բացատրել ծանակել՝ բառի իմաստը և կատարել Բառերի գանձատուփի 1-ին առաջադրանքը,

սովորեցնել հոգատար, ազնիվ, բարի, համբերատար, հա մեստ բառերի իմաստները

*Տեքստային աշխատանք

առակից կամ վերնագրից դուրս բերել ոչ բացահայտ տեղեկություններ (ինչի՞ վրա են աճում ընկույզը և սեխը)

• Իմաստային հատկանիշների վերլուծության մեթոդով բացահայտել սեխի և ընկույզի մի քանի էական հատկանիշներ

(պտուղների չափսերը, տեսքը, հոտը, հյութալիությունը, քաղցա րությունը, ձմռանը պահվելը և այլն)

• պարզել, թե ինչպիսի՞ մարդկանց են խորհրդանշում Սեխը և Ընկուզենին

•պարզել, թե սեխի ո՞ր հատկանիշներն էին Սեխի թփին պարծե նալու առիթ տվել.

• պարզել, թե ո՛ր հատկանիշներն էին Ընկուզենուն վստահություն տվել.

•առածների և իմաստախոսության ընթերցում և մեկնաբանում:

Քերականություն՝ օժանդակ բայի դրական և ժխտական ձևերը:

Տանը՝ կարդալ և նախատրաստվել առակը պատմելուն (Հարցերի և առա ջադրանքների արկղիկի 1-ին առաջադրանք), կատարել Բառերի գանձատուփի 2-րդ առաջադրանքը:

2-րդ դասաժամ

Կշռադատման փուլ

Աշակերտները պետք է՝

•գնահատական տան Սեխի վարքագծին.

•գնահատական տան Ընկուզենու պահվածքին և խոսքին. մեկնաբանեն ասացվածքները.

•առակի համար խրատ ձևակերպեն՝ արտահայտելով հիմնական միտքը (Հարցերի և առաջադրանքներիի արկղիկի 4-րդ առաջադրանք).

• ուրիշ վերնագիր առաջարկեն.

• զրույց ծավալեն մարդկային դրական և բացասական հատկանիշների մասին:

Քերականական աշխատանք՝ օժանդակ բայի ձևերի գործնական կիրառում (առակից դուրս գրել 3-4 բայ, որոշել նրանց ժամանակը, կազմել ներկայի և ապառնիի դրական և ժխտական ձևերը):

Տանը՝ կատարել Բառերի գանձատուփի 3-րդ առաջադրանքը, գրավոր կատարել Պատմությունների և հեքիաթների զամբյուղի 2-րդ առաջադրանքը՝ տեքստում ընդգծելով օժանդակ բայերը:

Դասի պլան N 2

Դասարան IV

Թեմա – Ուս ուսի որ տանք , սարեր շուռ կտանք

Դասի նպատակը – Կարդացածի հիմնական մտքի առանձնացում: Տեքստի վրա ինքնուրույն աշխատելու և դատողություններ անելու կարողությունների զարգացում:

Վերջնարդյունքը – Պատմել կամ վերապատմել տեքստը՝ պահպանելով դեպքերի տրամաբանական հաջորդականությունը և վերաբերմունք դրսևորելով նկարագրվող դեպքերի, հերոսների վարքագծի վերաբերյալ:

Դասի ընթացքը

Խթանման փուլ

Նախապատրաստական զրույց հեքիաթի վերնագրի շուրջ (Կարելի է միաժամանակ անդրադառնալ բարդ առաջադրանքին՝ վերհիշելով Գյուղ կանգնի գերան կկոտրի, Միասնությունը ուժ է առած-ասացվածքները)։

Իմաստի ընկալման փուլ

Հեքիաթի ընթերցում։

Բնագրային աշխատանք

* Բառային աշխատանք

• բացատրել ճարահատյալ, վայել բառերի իմաստները.

• սովորեցնել ջնջել բազմիմաստ բառի իմաստները. ուսուցանել ոտնատակ տալ, արգելք դնել, խելք խելքի տալ, գործի կպչել կայուն կապակցությունների իմաստները.

• կատարել Բառերի գանձատուփի 4-րդ, 5-րդ և 6-րդ առաջադրանքները. կատարել «Հարցերի և առաջադրանքների արկղիկի 2-րդ առաջադրանքը։

Տեքստային աշխատանք

հեքիաթի գործողությունների ճիշտ հաջորդականության որոշում
(Խրառնված հերթականության մեթոդի կիրառմամբ).
• առածների և մաստախոսության ընթերցում և մեկնաբանում։

Քերականություն՝ բայի ժամանակը (կատարել Հարցերի և առաջադրանքների արկղիկի 4-րդ առաջադրանքը)։

Տանը՝ կարդալ հնքիաթը, նախապատրաստվել պատմելուն, կատարել Բառերի գանձատուփի 1-ին առաջադրանքը:

2-րդ դասաժամ

Դասի սկզբում՝ հեքիաթի ընթերցում և բովանդակության վերարտադրում:

Կշռադատման փուլ

Աշակերտները պետք է՝

• գնահատական տան փղի արարքներին.
• կարծիք հայտնեն մրջյունների որոշման մասին.
• փորձեն հեքիաթը ներկայացնել պատումի հեղինակի դիրքորոշ մանը հակառակ՝ պատասխանելով հետևյալ հարցադրումներին.
ա) Ի՞նչ կլիներ, եթե փիղը թագավորի սիրելին չլիներ:
բ) Ի՞նչ կլիներ, եթե մրջյունները լինեին թագավորի սիրելին:
• գնահատեն թագավորի վերաբերմունքը մրջյունների նկատմամբ հեքիաթի սկզբում և վերջում.
• բացահայտեն հեքիաթի հիմնական ասելիքը (Հարցերի և առաջադրանքների արկղիկի 1-ին առաջադրանք և վերնագիր) հնարավոր է քննարկման ծավալում,
• զրույց ծավալեն թեմային առնչվող նոր սովորած և արդեն իմացած առածների շուրջ:

Քերականություն՝

• Հարցերի և առաջադրանքների արկղիկի 3-րդ առաջադրանք
• Սողոմոն Իմաստունը ողբաց... նախադասության մեջ գտնել բայերը, որոշել ժամանակը և կազմել այդ բայերի մյուս ժամանակների ձևերը:

Դասի պլան 3

IV դասարան

Թեմա՝ Լավ Ընկերը 1 (ըստ Աստվածաշնչի)

Ժամաքանակը՝ 2 դասաժամ

Նպատատակը – Դեպքերի նկարագրության տրամաբանական հաջորդականության և մտքի ճշտության պահպանում:

Վերջնարդյունքը – Պատմել կամ վերարտադրել տեքստը՝ պահպանելով դեպքերի տրամաբանական հաջորդականությունը և վերաբերմունք դրսևորելով նկարագրվող դեպքերի, հերոսների վարքագծի վերաբերյալ:

1-ին դասաժամ

Խթանման փուլ

Մտագրոհի միջոցով բացահայտել աշակերտների մտքում **ընկեր** բառի առաջացրած զուգորդումները: Պաստառի վրա պատկերել աշակերտների նշած հասկացությունները ներկայացնող գծապատկեր:

Իմաստի ընկալման փուլ

Պատմության ընթերցում՝ կանխագուշակության աղյուսակի կիրառմամբ (4 մասով):

Բնագրային աշխատանք

Բառային աշխատանք (կատարել յուրաքանչյուր հատվածի ընթերցումից հետո)

1-ին հատված (ավարտվում է Մարդը միայնակ էր ճամփորդում և քսակում բավական շատ փող ուներ նախադասությամբ),

• հանձնարարել Բառերի գանձատուփի 4-րդ և 5-րդ առաջա դրանքները ապառաժ, դարանակալել և քսակ բառերի իմաստները պարզելու համար,

• ոլորապտույտ, ամայի բառերի իմաստը պարզելու համար հանձնարարել Բառերի գանձատուփի 1-ին առաջադրանքը - 2-րդ հատված (ավարտվում է Ն յեց ճանապարհին ընկած վիրավորին ու նկատեց արյունը նախադասությամբ).

• բացատրել արյունաքամ բառի իմաստը.

• ամրապնդել անմարդաբնակ բառի իմաստն ու հոմանշությունը

3-րդ հատված (ավարտվում է Անցորդը շտապում էր նախադասությամբ).

• ամրապնդել շքեղ բառի իմաստն ու հոմանշությունը.

4-րդ հատված (վերջինն է),

• հանձնարարել Բառերի գանձատուփի 3-րդ առաջադրանքը օգ նության ձեռք մեկնել, հայացք գցել կայուն կապակցություն ների իմաստները սովորեցնելու համար:

Բնագրի ընթերցում ամբողջությամբ:

Տեքստային աշխատանք

•ճանապարհի նկարագրություն և նշված ու հնարավոր վտանգ ների թվարկում (Հարցերի և առաջադրանքների արկղիկի 2-րդ առաջադրանք).

• գործող անձանց բնորոշող հատկանիշների բացահայտում (Հարցերի և առաջադրանքների արկղիկի 3-րդ (բ) առաջադրանք):

Տանը՝ կարդալ բնագիրը, սովորել նոր բառերը, նախապատ բաստվել բնագիրը պատմելուն (Հարցերի և առաջադրանքների արկղիկի 1-ին առաջադրանքը):

Խաղ

ՀԱՄՈՁԻ՛Ր

ԽԱՂԻ ՆՊԱՏԱԿԸ: Հոմանիշ բառերը գտնելու կարողության զարգացում, բառապաշարի հարստացում:

ԽԱՂԻ ԿԱՀԱՎՈՐՈՒՄԸ: Պատրաստել հոմանիշ բառերի քարտեր այնպես, որ յուրաքանչյուր բառ ունենա երկու հոմանիշ, նախապատրաստել թղթեր և գրիչներ

ԽԱՂԻ ԸՆԹԱՑՔԸ: Խաղի մասնակիցներին բաժանել մեկական քարտ:

Հրահանգ: Ձեզանից յուրաքանչյուրն ունի մեկ բառ, որի հոմանիշները մյուսների մոտ են: Դուք պետք է շրջեք խմբում, գտնեք ձեր բառերի հոմանիշները և միմյանց անձայն «համոզեք» կազմել հոմանիշային եռյակներ: Հոմանիշ բառերը պետք է գրեք թղթի վրա և փակցնեք գրատախտակին:

2-րդ դասաժամ

«Լավ ընկերը 1». բովանդակության վերարտադրում, բառակազմություն

Իմաստի ընկալման փուլ (շարունակություն)

Բնագրային աշխատանքի շարունակություն.

• բնագրի ընթերցում և սովորած բառանյութի ամրապնդում,

•դեպքերի առանձնացում և հաջորդայնացում (Հարցերի և առաջադրանքների արկղիկի 1-ին առաջադրանք տանը կատարվված աշխատանքի ստուգում).

• հատվածի բովանդակության վերարտադրում:

Կշռադատման փուլ

Աշակերտները պետք է՝

• համեմատեն գնահատեն անցորդների վարքագիծը (Հարցերի և առաջադրանքների արկղիկի 3-րդ (ա) առաջադրանք).

• զրույց ծավալեն անտարբերության և եսասիրության մասին, իրենց վերաբերմունքն արտահայտեն դրանց նկատմամբ.

•ներկայացնեն իրենց հնարավոր վարքագիծը նման իրավիճակում (Հարցերի և առաջադրանքների արկղիկի 4-րդ առաջադրանք). • պարզեն առածի և բառախաղի հիմնական միտքը։

Բառագիտություն՝ Լեզվաբանի դաս

Խաղ

ՇՏԱՊԻ՛Ր ՎԵՐՑՆԵԼ

ԽԱՂԻ ՆՊԱՏԱԿԸ: Բառակազմական գիտելիքների ամրակայում, ուշադրության, արագ կողմնորոշվելու կարողության զարգացում:

ԽԱՂԻ ԿԱՀԱՎՈՐՈՒՄԸ: Պատրաստել տարբեր կազմություն ունեցող բառաքարտեր։

ԽԱՂԻ ԸՆԹԱՑՔԸ: Սեղանին դնել բոլոր բառաքարտերը: Խաղի մասնակիցներին կանգնեցնել սեղանի շուրջը։

Հրահանգ: Սեղանին դրված են տարբեր կազմություն ունեցող բառեր։ Դուք դրանցից պետք է ընտրեք միայն ածանցավորները և պահեք ձեզ մոտ: Հաղթող կճանաչվի ամենից շատ բառ վերցրած մասնակիցը։

Տանը՝ կատարել Բառերի գանձատուփի 2-րդ և 6-րդ առաջադրանքները, արտագրել և սովորել առածը և բառախաղը։

Դասալսողի եզրակացություն

Դասալսող՝ Նարինե Մկրտչյան

Եզրակացություն – Դասի կառուցվածքը համապատասխանում էր ԽԻԿ համակարգին, դասի կառուցվածքը համապատասխանում էր նաև նպատակային և վերջնարդյունքին, երեխաները ակտիվորեն ներկայացնում էին իրենց կարծիքը տեքստի բովանդակության մասին։ Աշակերտները կարողանում էին վերարտադրել տեքստը՝ պահպանելով դեպքերի հաջորդականությունը։ Սեփական կարծիք հայտնեցին հերոսների վարքագծի վերաբերյալ, կարևորեցին մարդկային վեհ արժանիքները։ Երեխաները ակտիվություն էին ցուցաբերում խաղերի ժամանակ, որը պթան էր հանդիսանում լեզվական նյութի հեշտ յուրացմանը։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հետազոտական աշխատանքը սկսել եմ հետևյալ դիրքորոշմամբ՝ չկա մեկ մեթոդական ճմարտություն , աշխատանքի արդյունքն արդյունավետ է, ոչ թե այն ժամանակ, երբ դասարանն է յուրացրել նյութը, այլ յուրաքանչյուր աշակերտ։

Խնդիրները լուծելու համար դիտարկել եմ մանկավարժության մեջ ընդունված ուսուցման ընդհանուր՝ ավանդական մեթոդները, եղանակները, հնարները, վարժությունների համակարգները, խաղը՝ ուսուցման արդյունավետ միջոց։

Աշխատանքի ընթացքում պարզվեց հետևյալը. խաղային տարրերի ներմուծումը որպես կանոն ակտիվացնում և հագեցնում է հնարավոր առավելագույն կենտրոնացմանն ու մոբիլիզացմանը, հաղթահարում ստեղծված դժվարությունները նյութի շուրջ։

Խաղերը բազմաթիվ են և բազմազան, սակայն խաղերի ճիշտ ընտրության և կազմակերպման դեպքում դրանք անդավաճան զինվորների նման կծառայեն թե՛ մեզ, թե՛ երեխաներին: Եթե մեզ տրվեր երկարատև ժամանակ աշխատանքը ավարտելու համար, ավելի լավ արդյունք կլիներ, սակայն այժմ ունեմ այն ինչ կա:

Գրականության Ցանկ

1. Գյուլամիրյան Ջ. «Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկան», 2006 թ.

2. Բալայան Ա. « 200 խաղ», 2017թ.

3. Քյուրքչյան Ա., Գյուրջինյան Դ., Տեր-Գրիգորյան Լ., Հեքեքյան Ն., «Մայրենի 2-4»: Ուսուցչի ձեռնարկ, 2007

4.https://hy.wikipedia.org/